



«ՆՈՐ ՍԵՐՈՆՆԵՂ»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION»
HUMANITARIAN NGO

ԺԱՄԱՆԱԿԻՆ

ՀԱՄԱՔԱՅԼ

16 ԱՊՐԻԼ/ՄԱՅԻՍ

Սույն ամսագիրը լույս է տեսնում յուրաքանչյուր ամիս, որն արտացոլում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:



«ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ» ԹԵՄԱՅՈՎ ՔԱՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ



2016 թ.-ի ապրիլի 25-28-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Գյումրիում կազմակերպել է «Խոցելի խմբերի հիմնախնդիրների իրազեկում խտրականության արգելք» թեմայով քառօրյա դասընթացը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնից, «Սևանի» հոգեկան առողջության կենտրոնից, Լոռու մարզային հոգեկայրադարանական

դիսպանսերից, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից և Գյումրու բժշկական կենտրոնից: Առաջին օրը մասնակիցները «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանի հետ մարդու իրավունքների հասկացության, պատմության, սերունդների և հիմնարար փաստաթղթերի վերաբերյալ տեսական գիտելիքներ ստանալուց հետո կատարել են գործնական աշխատանք, որի ժամանակ փորձել են ստեղծել նոր կղզի՝ իրենց նախընտրած կառավարման համակարգերով և իրավունքներով: Գործնական աշխատանքից հետո մասնակիցները ծանոթացել են ՀՀ կողմից վավերացված մարդու իրավունքների, ազատությունների և պարատականությունների վերաբերյալ միջազգային պայմանագրերին, միջազգային և ներպետական իրավունքի հիմնական սկզբունքներին, ինչպես նաև մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և մարդու իրավունքների եվրոպական դատարանին:



Երկրորդ օրը «Խոշտանգումների կանխարգելում/Ստամբուլյան արձանագրություն» թեմայի քննարկման ժամանակ Ա. Մակարյանը նախ ներկայացրել է խոշտանգումների սահմանումը ըստ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ կոնվենցիայի» և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» և ներպետական օրենսդրության: Այնուհետև անդրադարձել է խոշտանգման դեպքերի օրինական քննությանը և դեպքերի քննության ընթացակարգին: Մասնակիցները հանգամանալից կերպով ծանոթացել են նաև խոշտանգման դեպքերի մասին վկայող ֆիզիկական և հոգեբանական ապացույցներին և Ստամբուլյան արձանագրությանը:

«Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դրսևորումներ, կանխարգելման և պայքարի միջոցներ» թեման ներկայացնելիս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների ծրագրերի համակարգող Անահիտ Զիլինգարյանը մասնակիցների հետ նախ քննարկել է կարծրատիպերը և նախապաշարումները: Այնուհետև անդրադարձել է հավասարության և խտրականության տեսությանը, խտրականության տեսակներին, խտրականության պաշտպանված հիմքերին: «Խտրականության արգելքը միջազգային և ՀՀ կողմից վավերացված փաստաթղթերում» թեմայի քննարկման ժամանակ մասնակիցները ծանոթացել են մի շարք իրավական



փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, Մարդու իրավունքների եվրապեկան կենվենցիային և այլն: Դասընթացի վերջին օրը մասնակիցները չորս օրերի ընթացքում ստացած գիտելիքների հիման վրա առանձնացրել են մեր իրականության մեջ խտրականության դրսևորումները և դրսևորման պատճառները և վերջինիս դեմ պայքարի միջոցները՝ կարևորելով օրենքի կիրառումը, իրավապաշտպաններին դիմելը, իրավապահ մարմինների աշխատանքին հետամուտ լինելը, մարդու իրավունքների խախտումների դեպքերի մասին բարձրաձայնելը և հասարակության բոլոր շերտերի համար օրենքի հավասարությունը:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆՆ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ/ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՅՈՒՑՄԱՃ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻՆ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի «Բազմազանության և հավասարության» և «Իրավաբանական» բաժինների համակարգողներ Նարե Հովհաննիսյանը և Արթուր Մակարյանը 2016 թ.-ի ապրիլի 13-14-ը Վրաստանում մասնակցել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Առողջապահություն, Ֆինանսներ և Կառավարում» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատաժողովին: Ծրագիրն իրականացնում է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը (BSC) Վրաստանում

Միացյալ Ազգերի Ասոցիացիայի (UNAG) և Միացյալ Նահանգներում Abt Associates Inc. կազմակերպության հետ համատեղ և նպատակ ունի տրամադրելու տեխնիկական աջակցություն ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի ոլորտում գործող հասարակական կազմակերպություններին՝ զարգացնելով վերջիններիս ներքին և ֆինանսական կառավարման կարողությունները:

«Բի Էս Սի»-ն, համագործակցելով իր գործընկեր UNAG-ի հետ, ծրագրում ընդգրկված հասարակական կազմակերպություններին մատուցելու է համապարփակ տեխնիկական աջակցություն՝ կիրառելով զանազան մեթոդներ և եղանակներ, ինչպիսին են՝ վերապատրաստման դասընթացները, քույզինգ սեսիաները, աշխատանքային հանդիպումները և այլ միջոցառումներ:

Ծրագրի շրջանակներում ՀԿ-ներին օժանդակություն է ցուցաբերվելու կազմակերպության զարգացման հինգ տարբեր ուղղություններով, որոնք կնպաստեն ՀԿ-ների կայուն գործունեությանը: Այդ ուղղություններն են՝

1. ֆինանսների կառավարում,
2. ռեսուրսների մոբիլիզացում,
3. կազմակերպության ներքին կառավարում,
4. շահերի պաշտպանություն և համախոհների ընդլայնում,
5. կապերի հաստատում և գործընկերություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել հաղորդակցման առցանց մի հարթակ՝ ծրագրում ընդգրկված հասարակական կազմակերպությունների միջև շարունակական կապեր հաստատելու և աջակցություն ստանալու նպատակով: Հարթակը օգտագործվելու է նաև տեղեկատվության տրամադրման, տեխնիկական ռեսուրսները բաշխելու, ինչպես նաև գաղափարների փոխանակման նպատակով, որն իր հերթին ավելի է ընդլայնելու կազմակերպությունների պոտենցիալը:

«ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ
ԵՌՈՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ



2016 թ.-ի ապրիլի 29-ից մայիսի 1-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել է «ԼԳԲՏԻ անձանց իրավունքներ և առաջնորդություն» թեմայով եռօրյա աշխատանքային սեմինար, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններից և ԼԳԲՏԻ / SUS

ակտիվիստներ: «Իրավապաշտպանների առաջնորդական հմտությունների զարգացում» թեմայի շրջանակում մասնակիցները նախ ծանոթացել են իրար հետ՝ իրենց կյանքից ներկայացնելով մեկական դրվագ,

երբ իրենք հանդես են եկել որպես առաջնորդ: Այնուհետև դասընթացավար Արթուր Մակարյանը ներկայացրել է առաջնորդության տեսակները՝ ավտորիտար, դեմոկրատական, տրանսսաքցիոնալ և տրանսֆորմացիոն, որից հետո մասնակիցները խմբակային քննարկումների միջոցով համեմատել են առաջնորդություն տեսակները կամ փորձել են առանձնացնել դրանց առավելությունները կամ թերությունները: Մասնակիցներին ներկայացվել են նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հաջողության հասած առաջնորդներ Մարտին Լյութեր Կինգը, Նելսոն Մանդելան, Մալալա Յուսուֆզայր և այլք: «Ռազմավարական հայացք», «Հանրային խոսք» և «Պայմանավորվածություններ ձեռք բերելու հատկություն կամ բանակցային հմտություններ» թեմաներին ծանոթանալուց հետո մասնակիցները քննարկել են թիմի ձևավորման փուլերը (կայացման և ձևավորման փուլ, անկման և խառնաշփոթի փուլ, ստանդարտ փուլ և ձևավորված փուլ): Վերջում տեսական գիտելիքները կիրառել են գործնական խաղերի և քննարկումների միջոցով: «ԼԳԲՏԻ անձանց շարժման ռազմավարական պլանավորում» թեմայի շրջանակում դասընթացավար Արտակ Ալոյանը մասնակիցներին ներկայացրել է ռազմավարական պլանավորման հիմունքները: Այնուհետև խմբային քննարկումների միջոցով մասնակիցները ձևակերպել են տեսլականի և առաքելության սահմանումները: SWOT վերլուծության միջոցով խմբերը առանձնացրել են ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և ակտիվիստների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և արտաքին մարտահրավերները կամ սպառնալիքները: SWOT վերլուծության ներկայացման ժամանակ մասնակիցները անդրադարձել են նաև այն քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնիկական խնդիրներին կամ խոչընդոտներին, որոնց բախվում են վերոնշյալ կազմակերպությունները կամ ակտիվիստները: Այնուհետև մասնակիցները սահմանել են ԼԳԲՏԻ անձանց շարժման ռազմավարական պլանի նպատակները և ենթանպատակները, որոնք հիմնականում վերաբերում էին օրենսդրական փոփոխություններին կամ նախագծերի մշակմանը, ԼԳԲՏԻ անձանց կրթություն ստանալու հիմնախնդիրներին, ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական





կազմակերպությունների համագործակցության մարտահրավերներին և հասարակության մեջ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը:

ԼԳԲՏԻ անձանց շարժման ռազմավարական պլանի ամբողջական տարբերակը մոտ ապագայում կշրջանառվի եռօրյա աշխատանքային սեմինարի մասնակից, ինչպես նաև տեղական և միջազգային շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների միջև:

«ԼԳԲՏԻ անձանց իրավունքներ և առաջնորդություն» թեմայով եռօրյա աշխատանքային սեմինարն իրականացվել է Վրաստանում Նիդերանդների Թագավորության դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՆԴԵՄ «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի



«Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ դիմել էր ՀՀ քաղաքացի Սևան Շիրվանին, ում դեմ նախկին «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գումարի բռնագանձման հայցապահանջ էր ներկայացված ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան: Սակայն քաղաքացի Շիրվանին առաջին աստիճանում գործի քննության ընթացքին չի մասնակցել ծանուցված չլինելու պատճառով: Ինչի արդյունքում զրկված է եղել ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով

սահմանված կարգով հայտնել իր դիրքորոշումը, ապացույցներ ներկայացնել, առարկություններ անել և օգտվել օրենքով սահմանված կարգով իր դատավարական մյուս իրավունքներից: «Նոր Մերունդ» Մարդասիրական հկ իրավաբանական բաժինը ընդունեց քաղաքացու դիմումը և կազմեց վերաքննիչ բողոք: Իրավաբան Արթուր Մակարյանը վերաքննիչ բողոք կազմելիս անդրադարձել է քաղաքացու դատավարական և նյութական իրավական նորմերի խախտմանը, հղում կատարել ՄԻԵԴ նախադեպային որոշումների և խնդրել դատարանից վերացնել ստորադաս դատարանի կայացված վճիռը կամ գործը ուղարկել նոր քննության: Վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան նախագահությամբ՝ Կ. Հակոբյանի, մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Սմբատյանի և Ա. Հունանյանի:

Վերաքննիչ բողոքը բավարարվել է: ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՆԴ/3985/03/15 վչարման կարգադրությունը համարվել է ուժը կորցրած:

ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՄՈՖՈՒԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՖՈՒԱՅԻ ԴԵՄ ԴԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱՆ



«Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ, 2016 թ.-ի մայիսի 17-ին կազմակերպեց «Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ՝ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համար» թեմայով կոնֆերանս, որի նպատակն էր հանրությանը ներկայացնել օրենսդրական այն փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանական մեխանիզմների ստեղծմանը և նրանց հասարակության մեջ ինտեգրմանը:



Բացման խոսքով հանդես եկավ «Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը: Շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ վերջինս նշեց, որ «Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ն բարձր է գնահատում եվրոպական երկրների և Ամերիակայի Միացյալ Նահանգների որդեգրած քաղաքականությունը Հայաստանում ժողովրդավարական արժեքների կայացման և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Անդրադառնալով ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ՀԿ-ի ձեռքբերումներին և միջազգային համագործակցության փորձառությանը՝ ՀԿ նախագահը հավելեց, որ խտրականության դեմ պայքարելու և ԼԳԲՏԻ անձանց հիմնահարցերը բարձրացնելու հարցում էական նշանակություն ունի Հայաստանի իշխանության հետ համագործակցությունը: «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը կոչված է բարձրաձայնելու և վերհանելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման հիմնահարցերը ողջ աշխարհում: Մենք՝ որպես մարդու



իրավունքների պաշտպանության ջատագովներ, հայտնում ենք մեր համերաշխությունը օրվա խորհրդի կապակցությամբ և հետագա ավելի ընդգրկուն համագործակցության պատրաստակամությունը»,-իր խոսքը եզրափակեց Ս. Գաբրիելյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ֆլուր Նուիտեն-Էլզինգան, Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Ֆարնուորթը, Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Մաթիաս Քիսլերը և Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության նախագահ Լարիսա Մինասյանը: Խոսնակները իրենց ելույթներում կարևորեցին օրվա խորհուրդը Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների մշակման և կիրարկման ու հավասարության ստեղծման տեսանկյունից, անդրադարձան ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության գործընթացներին եվրոպական երկրներում, ինչպես նաև այդ ուղղությամբ Հայաստանում միջազգային կառույցների որդեգրած քաղաքականությանը: ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ու հավասարության խթանումը և արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու խրախուսումը առաջնային նշանակություն ունեն Հայաստանում գործող միջազգային դիվանագիտական կառույցների համար, ուստի հանդիպման խոսնակները նշեցին, որ իրենք պատրաստակամ են իրենց փորձը կիսելու խտրականության դեմ օրենքներ մշակող այլ երկրների, այդ թվում Հայաստանի հետ և նպաստելու հավասարության ու հանդուրժողականության խթանմանը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:





Առաջին նիստի ընթացքում տեղի ունեցան նաև «Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գանահատում», «Սեռափոխության վիրահատության իրավական կարգավորումները» և «ԳԲՏ / SUS անձանց ծառայությունը ՀՀ Զինված ուժերում» հետազոտությունների շնորհանդեսները: Հրավիրված դիվանագիտական, միջազգային, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացվեցին տրանսգենդեր համայնքի շրջանում սեռափոխության խնդրին առնչվող կարիքները, դրանց բավարարման խոչընդոտները (ինչպիսիք են օրինակ իրավական-օրենսդրական բացերը), դրանց հետևանքները և տրանսգենդեր համայնքի խնդիրների համակարգային լուծման նախընտրելի ուղիները, սեռափոխության իրավական կարգավորումների մի շարք առաջարկություններ՝ սեռափոխությունը կարգավորող նորմերի ներդրում, սեռափոխության վիրահատության կատարման պայմանների նախատեսում, սեռափոխված անձանց փաստաթղթային տվյալների փոփոխության հնարավորության նախատեսում, ՀՀ տարածքից դուրս արված վիրահատությունների խնդրի կարգավորում և գաղտնիության պահպանման խնդրի կարգավորումների նախատեսում, ինչպես նաև ԼԳԲՏԻ անձանց զինվորական ծառայության հիմնախնդիրները:

Երկրորդ նիստի ընթացքում բանախոսներ Իգարելլա Սարգսյանը /Եվրասիա Համագործակցության Հիմնադրամ, Հասստան/, Հայկ Աբրահամյանը /Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան/ և Անահիտ Միմոնյանը /Հակախտրականության կոալիցիա/ անդրադարձան ՀՀ ոչ պետական կառույցների կողմից խտրականության կանխարգելման միջոցներին և մասնավորապես խտրականության բոլոր տեսակների վերացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների ձեռքբերումներին ու խնդիրներին: Կոնֆերանսին ներկա են եղել նաև Հայաստանում Ֆրանսիայի հանրապետության դեսպան Ժան-Ֆրանսուա Շաղպանտյեն, ներկայացուցիչներ Ամերիկայի միացյալ նահանգների դեսպանատնից, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից, ՀՀ Փաստաբանների պալատից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից և ՀՀ Զինվորական կոմիսարիատից: Գործուղումների կամ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ՀՀ Արդարադատության և Առողջապահության նախարարություններից և Ազգային ժողովից, ցավոք, ներկայացուցիչ չի մասնակցել կոնֆերանսին:

Ավարտին ներկաները ամփոփեցին ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում բարձրաձայնված հիմնահարցերը, որոնց աստիճանական լուծումը կնպաստի Հայաստանում իրավունքների պաշտպանության և հավասարության խրախուսման մթնոլորտի ստեղծմանը:

ԴԵՄՊԱՆՆԵՐԸ ՏՐԱՆՍՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԵՎ ՀՈՄՏՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Ֆլուր Նուիտեն-Էլզինգա
Վրաստանում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան
«20 տարի առաջ իմ ընկերներից մեկը պատմեց իր հայրիկին, որ ինքը նույնասեռական է: Հայրիկի առաջին հարցն էր՝ ի՞նչ կարող ես ձեռնարկել դա ուղղելու համար: Ահա այսպես սկսեց իր ողջույնի խոսքը Վրաստանում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ֆլուր Նուիտեն-Էլզինգան ԼԳԲՏԻ անձանց իրավունքների քննարկմանը նվիրված կոնֆերանսին Երևանում: Քննարկումը կազմակերպվել էր «Նոր Մերունդ»



Մարդասիրական ՀԿ-ի կողմից մայիսի 17-ին՝ Տրանսֆորիայի և հոմոֆորիայի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ: Փոխդեսպանը իր խոսքն ավարտեց՝ նշելով, որ իր ընկերոջ հայրն ընդունեց վերջինիս այնպիսին, ինչպիսի որ կար:



Ջուլիթ Ֆանուրթ
Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիարյի Միացյալ Թագավորության դեսպան

Հոմոֆորիայի ու տրանսֆորիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիարյի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան դեսպան Ջուլիթ Ֆանուրթը ճաշի էր հրավիրել ԼԳԲՏ հարցերով

զբաղվող հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ ԼԳԲՏ անձանց հավասարության խնդիրները քննարկելու և ՀԿ-ների աշխատանքների մասին տեղեկանալու նպատակով:

Այնուհետև դեսպանը բացման խոսքով է հանդես եկել «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված կոնֆերանսին, որի նպատակը ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական բարեփոխումների քննարկումն էր: Իր խոսքում դեսպանը նշել է, որ ՄԹ կառավարությունը հանձն է առել պայքարել ցանկացած տիպի, ներառյալ՝ սեռական ուղղվածության և գենդերային ինքնության դեմ խտրականության: «Մենք հանձն ենք առել խթանել լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց իրավունքները: Դրանք հատուկ իրավունքներ չեն: Դրանք զուտ ԼԳՏԲ անձանց՝ մնացած բոլոր քաղաքացիների նման արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու և իրավունքներ ունենալու մասին է: Մարդու իրավունքները համընդհանուր են և պետք է հավասարապես կիրառվեն բոլորի համար:



Միացյալ Թագավորության օրենսդրությունը խտրականության կանխման տեսակետից առաջիններից է աշխարհում, և մենք պատրաստ ենք մեր փորձը կիսել խտրականության դեմ օրենքներ մշակող այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ: Ամենաուժեղը, ամենաապահովն ու ամենաբարեկեցիկն այն հասարակություններն են, որոնցում քաղաքացիները կարող են ապրել ազատ՝ առանց բռնության կամ խտրականության վախի, և որտեղ ԲՈՒՈՐ քաղաքացիները կարող են լիարժեք և ակտիվ դեր խաղալ հասարակության մեջ: Ահա թե ինչու է ՄԹ կառավարությունը, ներառյալ Արտաքին գործերի և համագործակցության նախարարությունը, մտադիր շարունակել հավասարության և հանդուրժողականության խթանումը թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակներում»:



Մաթիաս Քիալեր

Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան

Դեսպան Մաթիաս Քիալերն իր ողջույնի խոսքում ներկա գտնվող ՀԿ-ներին հորդորեց չթուլացնել ԼԳԲՏԻ-անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված իրենց ջանքերը Հայաստանում՝ բերելով Գերմանիայի օրինակը, որը ԼԳԲՏԻ-անձանց խտրականությունից և խարանումից պաշտպանության բարելավմանն ուղղված մի շարք նախագծերի իրականացման երկար պատմություն ունի:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-ԻՆ ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ, ՏՐԱՆՍՖՈԲԻԱՅԻ ԵՎ ԲԻՏՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը նշվում է մայիսի 17-ին և նպատակ ունի բարձրացնելու հանրային տեղեկացվածության մակարդակը ամբողջ աշխարհում



ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դրսևորվող բռնությունների, խտրականության և ճնշումների մասին, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս գործողություններ ձեռնարկել և ԶԼՄ-ներին, քաղաքակցություն մշակողներին ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ընդգրկել երկխոսության մեջ: Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ենթադրամաշնորհային պայմանագիր կնքեց «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ՝ ֆինանսապես աջակցելու վերջիններիս կողմից իրականացվող IDAHOT-ին նվիրված միջոցառումը:

Մայիսի 17-ին տեղական կազմակերպությունների և միջազգային դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների հետ «Իրավունքի կողմ» ՀԿ-ն տոնեց IDAHOT-ը: Երեկոյթն օգնեց նոր գիտելիքներ ձեռք բերել օրվա խորհրդի և նպատակի, ԼԳԲՏԻ ակտիվիզմի և Հայաստանի ԼԳԲՏԻ համայնքի խնդիրների մասին: «Իրավունքի կողմ» ՀԿ-ի բացման արարողությունը ևս տեղի ունեցավ երեկոյթի ընթացքում:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Ավարտվեց «Երիտասարդություն և Քաղաքականություն» երիտասարդական փոխանակման ծրագիրը, որը իրականացվում էր ERASMUS+ ծրագրի շրջանակներում Առաջին հանդիպումը տեղի ունեցավ 09.04.2016-18.04.2016թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որին մասնակցում էին 7 երկրներից ժամանած մասնակիցներ՝ Էստոնիա, Ուկրաինա, Լատվիա, Լիտվա, Գերմանիա, Բելառուս և Հայաստան:



Առաջին հանդիպման ընթացքում երիտասարդները ծանոթացան ներկա երկրների երիտասարդների ներգրավվածությանը քաղաքականության մեջ եւ պարզեցին երկրների առկա խնդիրները, ծանոթացան մասնակից պետությունների մշակութային արժեքների հետ:

Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ Ուկրաինայի Օդեսա քաղաքում, որտեղ նույն մասնակիցները իրականացրեցին սոցիոլոգիական հարցում Օդեսայի երիտասարդների շրջանում:

Սոցիոլոգիական հարցման նպատակն էր պարզել երիտասարդների ներգրավվածության և նրանց անտարբերության մակարդակը քաղաքականության մեջ:

Սոցիոլոգիական հարցման գործիքները եւ հաշվետվության կազմման ձևերը նախապես պատրաստվել էին «Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Դասընթացի «ռազմավարական պլանավորում» եւ «շահերի պաշտպանություն» թեմաները անցկացրեցին Սերգեյ Գաբրիելյանը եւ Արման Սահակյանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կազմվեցին ռազմավարական պլաններ, որոնք հետագայում կիրարկվելու են մասնակից երկրներում երիտասարդներին քաղաքականության մեջ ներգրավելու եւ քաղաքացիապես ակտիվ հասարակություն կերտելու համար:

Սոցիոլոգիական հարցման ամբողջական հաշվետվությունը ռուսերեն լեզվով կարող էք ընթերցել [այստեղ](#):



«ՄԱՐԴՈՒԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՂԵԳՆԱՃՈՐՈՒՄ



«Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2016 թ.-ի մայիս ամսին Եղեգնաձորում կազմակերպեց «Մարդու իրավունքներ, հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով դասընթաց, որին մասնակցել են ներկայացուցիչներ Վայոց Ձորի մարզպետարանից, Եղեգնաձորի քաղաքապետարանից, տարածքային

գրադվածության կենտրոնից, Օրիուս կենտրոնից, Քաղաքացիական երիտասարդական կենտրոնից, Կանանց տարածքային ասոցացիայից, Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցից, Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջից, Հայկական Կարմիր Խաչի Վայոց ձորի մարզային մասնաճյուղից և ՀՕՄ-ի Եղեգնաձորի մասնաճյուղից:

Դասընթացավար Արայիկ Զալյանի հետ մարդու իրավունքների համընդհանուր հասկացության, պատմության, սահմանումների, պաշտպանության միջոցների, տեղական և միջազգային օրենսդրությունների քննարկումից հետո մասնակիցները գործնական աշխատանքների միջոցով բարձրաձայնել են մարզում առկա մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին՝ փորձելով միասին գտնել լուծման ուղիներ: Օրվա երկրորդ կեսին անդրադարձել են խոսքի և տեղեկատվության ազատություն, ինչպես նաև ասելության խոսք, գրպարտություն և վիրավորանք թեմաներին:

Հասմիկ Հարությունյանը ներկայացրել է խտրականության արգելք թեման, որի ընթացքում



հանգամանորեն անդրադարձվել է խտրականության սահմանմանը, տեսակներին, խտրականության արգելքով պաշտպանված հիմքերին, խտրականության դեմ պայքարում պետության պարտավորություններին և ՀՀ-ում խտրականության դեմ օրենքի ընդունման անհրաժեշտությանը:

Ստացած տեսական գիտելիքների հիման վրա մասնակիցները սովորել են հայցադիմում կազմելու և դրա դեմ պատասխան ներկայացնելու, ինչպես նաև տեղեկատվության մասին հարցում կազմելու հմտությունները, լրացրել են թեմատիկ թեստեր, խմբերով քննարկել են մարդու իրավունքների խախտման դեպքերին առնչվող մի շարք խնդիրներ և ՄԻԵԴ-ի՝ «Վ.Վ-ն ընդդեմ Ռուսաստանի» նախադեպային որոշման հիման վրա կազմակերպել են դատախա

աղ՝ ներկայացնելով դատարան, բողոքաբեր և պատասխանող կողմերը: Դասընթացի գնահատման թերթիկներում բոլորը մեծ գոհունակությամբ են արտահայտվել դասընթացի բովանդակության, կազմակերպվածության, արդյունավետության և մատչելիության մասին՝ նշելով, որ այն հնարավորություն է տվել խորհել իրենց շրջապատում եղած խտրականության դրսևորումների մասին և կարևորել այն փաստը, որ յուրաքանչյուր անձ պետք է իրազեկված լիներ ու պաշտպաներ իր իրավունքները: Ավարտին մասնակիցներին շնորհվել են մասնակցության վկայականներ: Դասընթացը կազմակերպվել է Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում: